

ԱԶԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԱՌԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ
(1990-ական թվականների սկիզբ)*

ՀՐԱԶՅԱ ԲԱԼՈՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայաստանյան մամուլ, ազգ, ազգային, նորակազմ բառ, իմաստ, հայերեն, հայ, ուրա:

Նախաբան

Հայտնի իրողություն է, որ բառապաշարը, բառային կազմը լեզվի ամենազգայուն տարրն է: Այն, կարելի է ասել, անմիջապես արտացոլում է կյանքում, իրականության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, գործընթացներն ու երևույթները: Արդյունքում՝ պատմական տվյալ ժամանակաշրջանին բնորոշ փոփոխությունները, գործընթացներն ու երևույթները իրենց լեզվական արտացոլանքն են գտնում լեզվի բառային կազմում: Անցյալ դարի 80-ականների վերջն ու 90-ականների սկիզբը քաղաքական հեղաբեկումների, պատմաքաղաքական տեկտոնիկ փոփոխությունների ժամանակաշրջան էր. փլուզվում էր խորհրդային կայսրությունը, և նրա փլատակների վրա, իբրև անկախ պետություններ, ձևավորվում էին մինչ այդ մաս կազմող միութենական հանրապետությունները: Այդպիսի հանրապետություններից էր Նորհրդային Հայաստանը, որը մյուս հանրապետությունների նման բռնեղ էր անկախացման ուղին: Դա հայ ժողովրդի համար ազգային զարթոնքի, ազգային-ազատագրական շարժման պատմաշրջան էր: Այս հանգամանքով պայմանավորված՝ հետխորհրդային շրջանի հայաստանյան հրապարակախոսության լեզվում, մասնավորաբար՝ 1991–1993 թթ. հայաստանյան մամուլի հրապարակախոսության լեզվում մեծ թիվ են կազմում ազգությունը, ազգայինին վերաբերող նորակազմ բառերը, որոնք բաժանվում են երեք խմբի՝ ընդհանրապես ազգությունը, ազգայինին վերաբերող, կոնկրետ այս կամ այն ազգին վերաբերող և ազգություն ցույց տվող բառեր:

Ընդհանրապես ազգությունը, ազգայինին վերաբերող բառեր

Խնդրո առարկա նյութի մեջ ընդհանրապես ազգությունը, ազգայինին վերաբերող բառերն են՝ ազգախնդիր, ազգանպաստ, ազգացույց, ազգաշնորհ, ազգիչխան, ազգածավալ, ազգակառուցում, ազգամերձեցում, ազգաբարոյակախություն, ազգաբարոյախոսություն, ազգաճանաչություն, ազգալարական,

* Ներկայացվել է 21. I. 2024 թ., գրախոսվել է 01. II. 2024 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:

ազգավերջնական, ազգատուհանելի, տարազակազմ, երկազգ, ազգափոխել, միջազգայնականություն, ապազգայնություն, ազգայնամոլացում, անդրազգային, մոնոազգային, ենթաազգաբանական, ներէթնիկ, էթնոորոշիչ, միջէթնիկական:

Ինչպես տեսնում ենք, գերակշռում են ազգ բաղադրիչով կազմված բառերը: Առաջին հինգը՝ ազգախնդիր, ազգանպաստ, ազգացույց, ազգաշնորհ, ազգիչխան, բաղադրված են ազգ⁺պարզ գոյական կաղապարով, ուր գոյական վերջնաբաղադրիչներն արտահայտում են դերբայական իմաստ:

Այսպես «Ազատամարտ» թերթի 1991 թ. համարներից մեկում միևնույն նախադասություն մեջ հանդիպում են ազգախնդիր և ազգանպաստ ածականները: Առաջինի խնդիր բաղադրիչը, ըստ երևույթին, գործածված է հնացած իմաստով խնդրել («որոնել, փնտրել»): Հետևաբար, ազգախնդիր պետք է նշանակի «ազգի որոնած, ազգի փնտրած, ի շահ ազգի»: Երկրորդ ածականի իմաստն արտահայտվում է միջավայրում էլ հասկանալի է՝ «ազգին նպաստող՝ նպաստ բերող»: Օրինակ «Արեան մեջ խեղդուեցին ազգախնդիր ու ազգանպաստ ձգտումները» («Ազատամարտ», 08. III. 1991, էջ 14): Ազգանպաստ նորակերտ բառը հանդիպում է նաև հետագա շրջանի հրապարակումներում: Օրինակ «... Մեր եռամյա քաղաքական շարժման ընթացքում չեղվելով իրական ազգային ազատագրական ազգանպաստ ուղուց՝ կրեցինք անընդհատ կորուստներ...» («Երկիր», 14. I. 1992, էջ 4):

Ազգացույց [(«ազգ(ություն) ցույց տվող»)] և ազգաշնորհ («ազգի շնորհած, ազգի կողմից շնորհված») բառերը ևս միևնույն թերթի միևնույն հոդվածում են: Օրինակ՝ «Մենք ևս վստահ ենք, որ պետք չէ գերազնահատել լեզուի, իբրև ազգացույց ու ազգապահ արժեքի նշանակությունը: ... Տասնեակ ակնբաց հակատեսություններ կարելի է հրամցնել ազգաշնորհ լոյսով չարագործվող համամարդկային արժեքների, մարդու իրաւունքների գերապատուաբանութեան էպիգոններին» («Լուսաւորիչ», 26. VII. 1991, էջ 7):

Ազգիչխան ածականի իմաստն է «ազգի իշխանություն տակ գտնվող»: Օրինակ՝ «Առհասարակ աստվածիչխան կամ անձնիչխան մեծ կայսրությունները հիշեցնում են Լաֆոնտենի հայտնի առակից այն հավակնոտ գործին, որը ցույցին չափսերով գերազանցելու փափագից դրված՝ այնքան փքվեց, որ վերջ ի վերջո պատառ-պատառ եղավ. այնինչ ազգիչխան հունատիպ պետությունները միևնույն ժամանակ «մարդիչխան» են...» («Մաշտոց», 05. XI. 1991, էջ 2): Ազգիչխան պետություն, ասել է թե՛ պետություն, որը կառավարում է ազգը, որտեղ իշխում է ազգը: Ազգիչխան նորակազմ բառը իմաստով մոտ է դեմոկրատական, ժողովրդավարական, ժողովրդապետական բառերին:

Ազգածափալ ածականը ստորև բերվող նախադասության մեջ արտահայտում է «ամբողջ ազգի ծափալով», «ամբողջ ազգն ընդգրկող» իմաստները. փաստորեն, համազգային-ի հոմանիշն է: Օրինակ՝ «Խուսափենք աչքի ազգածափալ խավարումից ու խոստովանենք, որ առայժմ չի կայացել մեր անկախությունը» («Անկախություն», 16–22. XII. 1993, էջ 6):

Ազգ⁺բայանուն գոյական (-ում վերջածանցով) կաղապարով են կազմված ազգակառուցում, ազգամերձեցում բառերը: Ազգակառուցում գոյականը փոխաբերական իմաստ է արտահայտում՝ «ազգի բարգավաճմանը նպաստելը»: Օրինակ՝ «Այս հապճեպ վազքի նպատակը ոչ այլ ինչ էր, եթե ոչ մեղադրել

Հայաստանի կառավարությանը այն գնահատականի համար, որ ... ազգակառուցումը պահանջում է տարբեր մոտեցումներ, քան ակումբների հիմնադրումը...» («Հայք», 20. III. 1991, էջ 5): Ազգակառուցում գոյականի հոմանիշն է ազգաշինություն հնացած բառը:

Ազգամերձեցում՝ «մերձեցում ազգին, ազգայինին»: Օրինակ՝ «... Համաժողովը զուտ գործնականից բացի կունենա հայերենաճանաչման-ազգամերձեցման նշանակություն...» («Հայաստանի Հանրապետություն», 24. V. 1991, էջ 1):

Ազգաբարոյականություն («ազգի բարոյականություն, բարոյական պատկեր»), ազգապաշտպանություն («ազգային պաշտպանություն») և ազգաճանաչություն («ազգը ճանաչելը»)՝ նորակազմ բառերի կաղապարն է ազգ+բարոյական (-ություն վերջածանցով): Օրինակ՝ «Ազգաբարոյականության և ազգապաշտպանության համար հարկավոր են նոր խորհրդանիշներ և նոր արժեքներ, որոնք կստեղծեն նորանոր ավանդույթներ» («Անդրադարձ», 05. XII. 1991, էջ 3): «Միխիթարով ինքնախաբեություն», թե՞ իրատես ազգաճանաչություն» («Անկախություն», 01. V. 1993, էջ 4):

Ազգավարական բառի ազգավար բառակազմական հիմքի վար (վարել) բաղադրիչը գործածված է «առաջնորդել» իմաստով. ազգավարական բառացի նշանակում է «ազգը առաջնորդող» (հավանաբար, կազմվել է ժողովրդավարական, ռամկավարական բառերի նմանությամբ): Օրինակ՝ «...Մեծարգոյ խորհրդարանականներ... խնդրում ենք... չանտեսել մեր իսկապես սեպուհ ազգավարական նպատակը՝ հայոց պետականութեան արարումը» («Լուսավորիչ», 26. VII. 1991, էջ 7):

Ազգավերջնական, ազգաուսանելի նորակերտ բառերը կազմված են ազգ+ածական կաղապարով: Ազգավերջնական բառի իմաստն է «ազգի վերջը, վախճանը կանխազգացող»: Օրինակ՝ «Խորհրդանշական է, որ անախի թշվառության ժամանակներում հասարակական գիտակցության մեջ ուժեղանում են ազգավերջնական տրամադրությունները» («Անկախություն», 01. V. 1993, էջ 4):

Ազգաուսանելի ածականն արտահայտում է «ազգի համար ուսանելի՝ ուսանելու արժանի» իմաստը: Օրինակ՝ «Տեղն է հիշել Գարեգին Նժդեհի ազգաուսանելի խոսքերը» («Անկախություն», 01. V. 1993, էջ 4):

Իմաստային որոշակի ընդհանրություն ունեն տարազգակազմ և երկազգ ածականները: Տարազգակազմ բառը բազմազգ-ի հոմանիշն է, նշանակում է «տարբեր ազգերից կազմված»: Օրինակ՝ «Ապագայում տեղի կունենան երևույթներ, որոնք Ռուսաստանից և այլ տարազգակազմ հանրապետություններից կպոկեն մանր «ազգային բեկորներ»» («Հայաստանի Հանրապետություն», 17. XII. 1991, էջ 2):

Երկազգ՝ «երկու ազգ ունեցող, երկու ազգից բաղկացած, կազմված»: Օրինակ՝ «Այս եռուղեով նպատակն է կղզու հույն (650 հազար) և թուրք (175 հազար) համայնքների միջև վերացնել փշալարերով սահմանագիծը և ստեղծել երկազգ անկախ դաշնակցային հանրապետություն» («Հայք», 17. VII. 1991, էջ 3):

Ազգ բաղադրիչով մեզ ընդամենը մեկ բայ է հանդիպել՝ ազգափոխել [(«ազգ(ություն)ը փոխել»): Օրինակ՝ «...Նրա զավակներից ամեն մեկը դա

արել է, ո՞վ ինչպես կարողացել է. ոմանք՝ զենքը ձեռքին պայքարելով, ... մյուսները՝ ազգափոխվելով, դավանափոխվելով ու լեզվափոխվելով» («Անդրադարձ», 05. II. 1991, էջ 4):

– Ությունն ածանցով է կազմված միջազգայնականությունն բառը: Թեպետ կա ինտերնացիոնալիզմ օտար բառի հայերեն համարժեքը՝ միջազգայնություն, այնուհանդերձ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 1991 թ. համարներից մեկում հոգվածագիրը գործածել է միջազգայնականությունն բառը: Օրինակ՝ «Երկրորդ, ինքնին խիստ կարևոր, բայց միջազգայնականությունից բխող խնդիրը՝ դաշնագրում չպետք է երևա պաշտոնական լեզուն» («Հայաստանի Հանրապետություն», 16. VIII. 1991, էջ 3): Ընդգծենք, որ ազգայնականությունն նշանակում է «նացիոնալիզմ»¹, «ազգայնական լինել»², իսկ ազգայնականը իր հերթին՝ «ա., գ. 1. ազգայնականության հետևորդ: 2. ազգայնականության հատուկ՝ վերաբերող, նացիոնալիստական»³, «իր ազգի շահերը մյուսների շահերին հակադրող ու նրանցից գերադասող, նացիոնալիստ»⁴: Իբրև ազգայնականությունն բառի հոմանիշներ նշվում են՝ նացիոնալիզմ և ազգայնամոլությունն բառերը⁵: Հետևաբար, միջազգայնականությունն նորակազմ բառը, հատկապես՝ արտախոսքային միջավայրում, կարող է սխալ ընկալվել կամ անհասկանալի լինել:

Ազգայնամոլացումն բառի իմաստն է «ազգայնամոլացնելը՝ ազգայնամոլ դարձնելը»: Օրինակ՝ «Անշուշտ, որոշ հարցերում որոշ անպատասխանատու ֆաշիստների տգիտության և գավառամտության պատճառով ցուցաբերվեց որոշակի անհարկի և կործանարար շտապողականություն՝ կապված որոշ վայրերի ազգայնամոլացման հետ» («Մաշտոց», 06. VII. 1991, էջ 8):

Բառակազմական տեսակետից ուշագրավ է անդրազգային ածականը. անդր– նախածանցը «մի բանից, մի վայրից այն կողմը, այն կողմում գտնվող, այն կողմի, դեպի այն կողմ, այնտեղ» իմաստներով, որպես կանոն, բառեր է կազմում թանձրացական գոյականներին, տեղանուններին միանալով: Անդրազգային նշանակում է «ազգայինից դուրս գտնվող»: Օրինակ՝ «Խեղճության ամեն տարին խորհրդայնացված հայի մեջ այդ ամբողջությանը վերացականացման երանգ է տվել: Ողբալու մենաշնորհ: Օգը տատանելու ու ինչ-որ վերին, անդրազգային ու անանձնական լուծման սպասման փակ ոլորապտույտ» («Հայաստանի Հանրապետություն», 24. IV. 1991, էջ 1): Այս ածականին իմաստով մոտ են ապազգային, վերազգային⁶ ածականները:

Օտար բաղադրիչներով կազմված քչաթիվ բառերից է մոնոազգային ածականը: Մոնո օտար ձևով չեն հայերեն մեն («մի», «միայն») ձևով չեն համարժեքն է: Ուստի մոնոազգային պետք է նշանակի «մեկ ազգի, մեկ ազգի վերաբերող՝ հատուկ»: Ստորև բերվող օրինակում այս ածականն արտահայտում է «մեկ ազգից բաղկացած, կազմված» իմաստը: Այսպես՝ «Հնարավոր է, որ

¹ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետ՝ ԺՀԼԲԲ). 1969, 8:

² Ա զ ա յ ա ն. 1976, 6:

³ ԺՀԼԲԲ. 1969, 8:

⁴ Ա զ ա յ ա ն. 1976, 6:

⁵ Ս ու ը ք ի ա ս յ ա ն. 2009, 7:

⁶ Է լ ո յ ա ն. 2002, 436–437:

առաջանան մի քանի նոր պետություններ՝ փոքրամիջ, մոնոպոլիստական բնակչությամբ» («Անկախություն», 11. V. 1993, էջ 3):

Իմաստային տեսակետից ուշագրավ է ենթաազգաբանական նորակերտ բառը: Վերջինս, թվում է, պետք է կազմված լինի ազգաբանություն բառից, որը, ըստ ԺՀԼԲԲ-ի, հնացած բառ է, նշանակում է «որևէ տոհմի ճյուղազրույթուն, սերնդաբանություն»⁷: Սակայն ստորև մեջբերվող նախադասության մեջ, կարծում ենք, ենթաազգաբանական նշանակում է «ենթաազգային», քանզի ելնելով նշված բառի կիրառության խոսքային միջավայրից՝ ազգաբանական բաղադրիչը չի կարող արտահայտել «որևէ տոհմի ճյուղազրույթունը, սերնդաբանությունը վերաբերող» իմաստը: Օրինակ՝ «Միասնացումն իրականացվում էր Հայաստանի մայրաքաղաքի մակարդակով, որտեղ ժողովրդագրական կտրուկ աճի և ներգաղթի պայմաններում ներկայացված էին բոլոր ընկերային և ենթաազգաբանական մշակույթները» («Անդրադարձ», 19. XII. 1991, էջ 5): «Արևելահայ և արևմտահայ ենթաազգաբանական մշակույթների, փոքր համայնքների ավանդույթների միացորդները «պահածոյացվեցին» և պահպանվեցին» («Անդրադարձ», 19. XII. 1991, էջ 5):

Էթնոս(ոս) բաղադրիչով կազմված երեք բառ կա՝ ներէթնիկ, էթնոլոգիչ, միջէթնիկական (էթնոս հունարեն բառ է, որը նշանակում է «ժողովուրդ», «ցեղ»):

Ներէթնիկ նորակազմ բառը ներազգային բառի հոմանիշն է: Օրինակ՝ «Մեր անցյալը, ցավոք, հարուստ է ներէթնիկ տեղաշարժերով» («Հայաստանի Հանրապետություն», 06. II. 1991, էջ 2):

Էթնոլոգիչ՝ «ազգը որոշող տարրերով»: Օրինակ՝ «Ժամանակի ընթացքում քաղաքական և էթնոէկոլոգիական տարբեր գործոնների ներքո փոքր ժողովուրդներն աստիճանաբար կտրվում են իրենց էթնիկ արմատներից, կորցնում են լեզուն, մշակույթի էթնոլոգիչ գծերը, ապա և՛ ինքնագիտակցությունը» («Հայք», 13. XI. 1991, էջ 5): Նորակազմ էթնոլոգիչ բառը նույնպես ունի հոմանիշ՝ ազգորոշ, որը, սակայն, հազվադեպ է գործածվում: Վերոնշյալ նորակազմության իմաստը սովորաբար արտահայտվում է ազգային ածականով:

Միջէթնիկական-ն էլ ազգամիջյան-ի հոմանիշն է. օրինակ՝ «Հարակից երկրների միջև միջէթնիկական սահմանների համաձայնեցումը արտակարգ բարդության խնդիր է» («Անկախություն», 11. V. 1993, էջ 3):

Կոնկրետ այս կամ այն ազգին վերաբերող բառեր

Կոնկրետ այս կամ այն ազգին վերաբերող բառերն իրենց հերթին բաժանվում են երեք խմբի՝ հայերին, ռուսներին և մի քանի այլ ազգերի վերաբերող բառեր:

Հայ ազգին վերաբերող նորակազմ բառերն են՝ հայակառույց, հայակենտրոն, հայակերտում, վերահայանալ, վերահայացում, հայահառուկ, հայարի, հայալիկ, աղբեջանահայ, համբուրգահայ, տարոնահայ, վաղնջահայ, հայեցիա՝ նալ, համահայոց, արտահայություն:

Հայակառույց, հայակենտրոն, հայակերտում բառերը կազմված են հայ+գոյական (կամ բայանուն) կաղապարով: Հայակառույց բառի կառույց բաղադրիչը դերբայական իմաստ ունի՝ «հայերի կառուցած, հայերի կողմից կառուց-

⁷ ԺՀԼԲԲ. 1969, 7:

ված»։ Օրինակ՝ «...Թիֆլիսի ու Բաքվի շքեղ հայակառույց տները լցվեցին տեղական լկտի վերնախավ-նամենկլատուրայով» («Անդրադարձ», 08. I. 1991, էջ Բ)։

Հայակենտրոն՝ «Հայերին, Հայաստանը կենտրոն համարող»։ Օրինակ՝ «Մենք ստեղծել ենք «Հայակենտրոն» մի քաղաքագիտություն, որ մեր ցավերի հանդեպ ունեցած վերաբերմունքով է որոշում որևէ մի պետության դրական կամ բացասական գնահատականը» («Հայք», 13. III. 1991, էջ 2)։ Այս նախադասության մեջ նշված նորակազմ բառը բացասական իմաստով է գործածված՝ Հայակենտրոն քաղաքագիտություն, ասել է թե՛ սոսկ հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքով առաջնորդվող քաղաքագիտություն։

Հայակերտում բայանուն գոյականը փոխաբերական իմաստ ունի՝ «Հայաստանի, հայ ժողովրդի ծաղկումը, բարգավաճումը, շենացումը»։ Օրինակ՝ «Դաշնակցության համար բնորոշիչը եղել է հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հայակերտումն ու հայրենակերտումը» («Հայաստանի Հանրապետություն», 05. VII. 1991, էջ 3)։

«Վերստին՝ կրկին հայանալ(ը), հայացնել(ը), հայկական դարձնել(ը)» իմաստներն արտահայտվել են վերահայանալ, վերահայացնել բայերով և վերահայացում բայանուն գոյականով։ Օրինակներ՝ «Հենց ազգի շահերն են պահանջում փրկել այս երեխաներին, պահ առաջ օգնել վերահայանալու...» («Դպրություն», 04. I. 1991, էջ 3)։ «Կիսատ կմնայ հողաբաժանումը, հայոց լեզվով Հայաստանը վերահայացնելը» («Լուսավորիչ», 25. V. 1991, էջ 2)։ Ապաբոլչեկացումից հետո մեր խնդիրը Հայաստանի հայկականացումն է, մեզանից յուրաքանչյուրի վերահայացումը, երկրորդում եմ մեզնից յուրաքանչյուրի վերահայացումը» («Երկիր ավետյաց», 1991, № 5, էջ 4)։ «Դրանով ապահովվեց «Հայ երեխան՝ հայկական դպրոց» սկզբունքի գործունեությունը, սկիզբ դրվեց Հայաստանի վերահայացմանը» («Դպրություն», 04. I. 1991, էջ 3)։

Հայահատուկ՝ «Հայերին, հայ ազգին հատուկ՝ բնորոշ՝ տիպիկ»։ Օրինակ՝ «Օտարագգի թարգմանիչները, ուսումնասիրողները մեծ համակրանքով են խոսել «Հայոց պատմության» և նրա հեղինակի մասին, թեև ունեցել են նաև իրենց տարակարծությունները, անհամաձայնությունները, որոնք ինքնին հետաքրքիր են և արդյունք են ոչ միայն դարի հայոց կյանքի յուրատեսակ ըմբռնման, այլև դարաշրջանի մեր ազգային, քաղաքական-մշակութային ու դավանաբանական բարդ ու հայահատուկ հարցերի մեջ մինչև վերջ խորանալու ու զգալու անկարողություն» («Հայաստանի Հանրապետություն», 18. IX. 1991, էջ 1)։

Հայարի նորակերտ բառը, հավանաբար, կազմվել է հայ արի բառակապակցությունից։ Օրինակ՝ «Ար-Արա արևի աստվածը, հիրավի, եղել է հայարիների գլխավոր աստվածը...» («Այսօր», 04. VII. 1992, էջ 2)։

Հայ բաղադրիչով մեզ միայն մեկ բայ է հանդիպել՝ հայազրկել-ը («Հայերից զրկել»)։ Օրինակ՝ «... Սա նոր բան է, դեռ Պետրոս Առաջինի օրոք է Հայաստանը հայազրկելու ծրագիր մշակվել» («Հայք», 28. V. 1991, էջ 5)։ Կազմվել են նաև հայազրկում, հայաթափություն բառերը⁸։

⁸ ԷԼՈՅԱՆ. 2002, 272:

Որոշ նորակազմություններ արտահայտում են «որևէ երկրում, հազվադեպ՝ քաղաքում, նահանգում, գավառում ապրող հայ, հայություն, նրան հատուկ, վերաբերող» իմաստները: Այս կարգի բառերը կազմվել են երկրի, բնակավայրի, վարչական միավորի անուն+հայ կաղապարով: Օրինակներ՝ «...Աղբբեջանահայերի բնակեցումը արևմտահայ հատվածի միջավայրում հազիվ թե հանգեցնի վերոհիշյալ ցանկալի արդյունքին» («Հայաստանի Հանրապետություն», 06. II. 1991, էջ 2):

«Համբուրգահայ համայնքի անդամները արցախյան հարցի վերաբերյալ ևս անտարբեր չեն» («Դպրություն», 12. IX. 1991, էջ 7):

Տարոնը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառներից է, տալոնահայ տրամաբանորեն պետք է նշանակի «Տարոնում բնակվող հայ»: Սակայն այս նախադասության մեջ ավելի շուտ արտահայտում է «տարոնահայ նախնիներ ունեցող» իմաստը: Օրինակ՝ ««Երկիր ավետյաց» թերթի խմբագրությունը նամակներ է ստացել «Ռանչպարների կանչը» վիպապրի բեմադրության մասին, որ իրականացրել է Հայաստանի մայր թատրոնը: Նամակների հեղինակները հիմնականում տարոնահայեր են» («Երկիր ավետյաց», 1991, № 3, էջ 8):

Հայ ազգին վերաբերող նորակազմ բառերից է վաղնջահայ-ը («վաղնջական ժամանակներում ապրած հայ»): Օրինակ՝ «... Արևապաշտությունը վաղնջահայերի ու արիական ցեղերի մոտ վկայված է» («Այսօր», 04. VII. 1992, էջ 2):

Կազմության տեսանկյունից ուշագրավ է համահայոց բառը. հայոց («հայկական, հայերի») բաղադրիչը հայ բառի գրաբարյան հոգնակի սեռական հոլովաձևն է, որն արդի հայերենում բառակազմական աշխուժություն չունի և, որպես կանոն, հանդես է գալիս մի քանի արտահայտության մեջ՝ հայոց լեզու, հայոց պատմություն, ամենայն հայոց կաթողիկոս, հայոց հարց (հազվադեպ) և այլն, ինչպես նաև գործածվում է խոսքը տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու համար՝ հայոց կյանք (նախորդ օրինակներից մեկում), հայոց մեծ բարերար (մեջբերվող օրինակում), հայոց մեջ, հայոց համայնական ոգի և այլն: Խոսքը տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու նպատակն ունի նաև համահայոց («ամբողջ համայն հայություն») նորակերտ բառը: Օրինակ՝ «Հայոց մեծ բարերարներին մոռացանք: Մոռացանք, թե ո՞վ էր Ալեքսանդր Մանթաշյանը՝ համահայոց կյանքում» («Դպրություն», 20. VI. 1991, էջ 1):

Թեպետ կա «հայրենիքից դուրս գտնվող, աշխարհով մեկ սփռված հայություն» իմաստներն արտահայտող Սփյուռք բառը, այնուհանդերձ, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի համարներից մեկում գործածված է նույն իմաստ արտահայտություն նորակազմ բառը: Օրինակներ՝ «Վերջին տարիներին հասարակության լայն շրջաններում արտահայտության շուրջն ընթացող խոսակցությունները պրոբլեմների ընդհանուր շղթայից առանձնացնում են հարցերի մի խումբ, որը վերաբերում է արտահայտության «խորհրդային սփյուռք» պայմանական անունը կրող հատվածին: Արտահայտության հետ կապի մեխանիզմների շուտափուլյա ստեղծման գաղափարն այսօր կարևորվում է այն պարզ տրամաբանությամբ, որ ազգապահպանության գործի առկա նախադրյալները վաղը կարող են նաև չլինել» («Հայաստանի Հանրապետություն», 12. IV. 1991, էջ 3): Նշենք, որ լեզուն չընդունեց այս նորակազմ բառը:

Հայեցի բաղադրիչով է կազմված հայեցիմանալ («հայեցի դառնալ») բառը: Օրինակ՝ ««Վերածնունդ» թերթի այս «բազմակարծությանը» ապրիլյան համարներից մեկում հաջորդում է ... ներկայումս հայեցիմանալու միտում ունեցող դպրոցի ուսուցչի վաստակաշատ Հրանտ Մաթևոսյանի Համո եղբոր

հետևյալ մարգարեությունը. «Կապուտիկյանը խիստ կարևոր համարեց ազգի ֆիզիկական գոյությունը ...»» («Հայք», 28. V. 1991, էջ 6): Ունենք նաև հայեցիացում բայանուն գոյականը⁹:

Տարածված են նաև ուսև ազգին վերաբերող նորակազմ բառերը՝ ուսևակիրթ, ուսևահոգի, ուսևապաշտ, ուսևամտած, ուսևամտածություն, ուսևանվիրվածություն, ինքնաուսևացում, ուսևաֆոբիա, ուսևաման:

Ռուսևակիրթ, ուսևահոգի բառերն արտահայտում են «մի բան ունեցող» ընդհանուր իմաստը («ուսևական կրթություն ունեցող (ստացած), «ուսևի ուսևական հոգի ունեցող»): Օրինակ՝ «Լեզվական անհեռատես քաղաքականությունն է պատճառը, որ հիմա ես այս տողերը գրում եմ բոլշևիկյան ուղղագրությամբ ու իմ սերնդակիցների 30 տոկոսը ուսևակիրթ է և ուսևամտած, ... որ թերթերի կրպակները լեցուն են ուսևատառ և ուսևահոգի մամուլով...» («Հայաստանի Հանրապետություն», 13. VII. 1991, էջ 2):

Ռուսևապաշտ, ուսևամտած նորակազմ բառերի կաղապարն է ուսև+բայարմատ՝ ենթակայական դերբայի իմաստով («ուսևներին պաշտող», «ուսևերեն մտածող»): Օրինակներ՝ «Ռուսևխոս, ուսևամետ, ուսևասեր, ուսևամոլ, ուսևապաշտ հայերն են հայոց լեզվի օգտին անմեղ քարոզչությունն իսկ ընկալում որպես արշավանք ուսևաց լեզվի դեմ...» («Հայաստանի Հանրապետություն», 13. II. 1991, էջ 4): «Լեզվական անհեռատես քաղաքականությունն է պատճառը, որ հիմա ես այս տողերը գրում եմ բոլշևիկյան ուղղագրությամբ ու իմ սերնդակիցների 30 տոկոսը ուսևակիրթ է և ուսևամտած...» («Հայաստանի Հանրապետություն», 13. VII. 1991, էջ 2):

Ռուսև+գոյական (-ություն վերջածանցով) կաղապարով են կազմված ուսևամտածություն («ուսևերեն մտածելը») և ուսևանվիրվածություն («ուսևներին՝ ուսև ազգին, Ռուսևաստանին նվիրված, հոգեպես կապված լինելը») բառերը: Օրինակներ՝ ««Հայկական» ապագգային տենդը իր գործունեությամբ համար նորանոր եղանակներ է փնտրում և գտնում, այդ եղանակներից մեկն էլ «Կապույտների միությունն» է, որ սկզբից ևեթ երևան եկաւ իբրև ուսևախօսությամբ և ուսևամտածությամբ կենտրոն» («Լուսաւորիչ», 08. II. 1991, էջ 3): Ե՛վ մեր հարևանները, և՛ եվրոպացիները հայերիս մեղադրել են ուսևասիրություն, ուսևանվիրվածության մեջ...» («Հայաստանի Հանրապետություն», 19. VII. 1991, էջ 3):

Ինքն դերանունը բայանուն գոյականներ կերտելու տեսանկյունից շատ կենսունակ է: Օրինակներ՝ ինքնագարգացում, ինքնակենտրոնացում, ինքնահաստատացում, ինքնամերկացում, ինքնանսեմացում, ինքնառչնացում և այլն: Այս բառերի նմանությամբ է կազմվել ինքնաուսևացում («ինքնակամ ուսևացում») նորակերտ բառը: Օրինակ՝ «Ձի կարելի անտեսել պետականության կորստի դարավոր ազդեցությունը, ինչպես նաև վերջին յոթնամյա տարվա ընթացքում ազգովի ինքնաստորացման, ինքնաուսևացման ծանր հետևանքները» («Դպրություն», 01. I. 1991, էջ 3): «...Հայի «ստեղծագործ» ուսևամոլ հոգին ինքնաուսևացման նոր միջոց գտաւ՝ թերթերը» («Լուսաւորիչ», 08. II. 1991, էջ 3):

Ռուսև ազգին վերաբերող նորաբանությունների մեջ կան նաև օտար բառեր՝ ուսևո(ա)ֆոբիա, ուսևաման: Ռուսևո(ա)ֆոբիա-ն ուսևատյացություն բառի օտար համարժեքը, շատ տարածված է մեր ուսևամնասիրած հրապարակախո-

⁹ ԷԼՈՅԱՆ. 2002, 276:

սովորյալ լեզվում: Օրինակներ՝ «Ձեզած ռուսատյացության մասին շատերն են ահագանգում այս օրհնյալ թերթի էջերում: Գուրգեն Կարապետյանը (8. 03. 91) ուղղակի խոսում է «ողջ հանրապետությունում ռուսոֆոբիայի համաճարակի տարածման մասին» («Հայաստանի Հանրապետություն», 18. V. 1991, էջ 3): «Բացի այդ ռուսոֆոբիա (ատելություն ամեն ռուսականի հանդեպ) ևս գոյություն ունի» («Անդրադարձ», 22. I. 1991, էջ 4):

Ռուսաման-ը ռուսամոլ-ի օտար համարժեքն է (հավանաբար, կազմվել է նարկոման, էրոտոման, կրեպտոման և այս կարգի այլ բառերի նմանությունով): Օրինակ՝ «Պատմության դասերը աներկբա հուշում են, որ պետք է ազատվել հայերի ռուսաման կողմնորոշման և ռուսասիրության հարցում ստեղծված նախապաշարմունքից...» («Հայաստանի Հանրապետություն», 19. VII. 1991, էջ 3):

Այլ ազգերի վերաբերող բառերն են՝ թաթարացնել, մոնղոլացնել, ադրբեջանացնել, վրացականացում, սլավոնականացում, անգլոֆիկացիա: Նշված բառերը արտահայտում են «որևէ ազգի հատկանիշներով օժտել, որևէ ազգին դարձնել» ընդհանուր իմաստները:

Առաջին երեք բառերը (թաթարացնել, մոնղոլացնել, ադրբեջանացնել) կազմված են ազգի անուն+ացնել կաղապարով: Օրինակներ՝ «Ռուսաստանը թոթափեց թաթարական լուծը, բայց անհուսալիորեն ուշացած, նա արդեն վերջնականապես թաթարացվել էր: Թաթարացվել էր նախ և առաջ այն առումով, որ այլևս ինչպես թուրք-թաթարները, չէր ճանաչում ուրիշ ժողովուրդների բնիկ, պատմական իրավունքները նրանց՝ հայրենիք կոչվող տարածքների վրա» («Երկիր ավետյաց», 1991, № 7, էջ 4): Ինչո՞ւ պիտի կոչվեն սակայն, որին ճորտատիրական 10 դարերի և հեռուստատեսության 30 տարվա ընթացքում մոնղոլացրել են, իր լուրիկը 2 կոպեկով սոցիալական զարտուղի ճանապարհով վաճառի...» («Հայք», 06. II. 1991, էջ 3):

Վրացականացում, սլավոնականացում նորակազմ բառերի կաղապարն է ազգի անուն (+ական)+ացում: Օրինակներ՝ «Ախալքալաքցին շատ լավ է ընկալում իշխանության բոլոր մարմինների վերից վար վրացականացման վտանգավորությունը» («Հայք», 30. VIII. 1991, էջ 10): «Նորհրդահայերին իրենց անցյալի մշակույթից և սիյուռքից մեկուսացնելու նպատակ ունեն մշակութային հեղափոխության շրջանակներում կատարված հայերենի ուղղագրական «բարեփոխումը», որը բարեբախտաբար չհասավ իր տրամաբանական ավարտին՝ սլավոնականացմանը» («Հայաստանի Հանրապետություն», 08. VI. 1991, էջ 3):

Անգլոֆիկացիա օտար բառը, ըստ երևույթին, կազմվել է ռուսիֆիկացիա բառի նմանությամբ: Օրինակ՝ «... Ռուսիֆիկացիայից հետո մեզ սպառնում է անգլոֆիկացիա՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով» («Հայք», 27. XI. 1991, էջ 6):

Ազգություն ցույց տվող բառեր

Ազգություն ցույց տվող բառերն են՝ պարթևազգի, ճապոնազգի, կիսառուս, կիսահրեա, ռուսհի, եզդուհի, հնդարի: Այս կարգի բառերը սովորաբար կազմվում են -ացի, -եցի, -ցի ածանցներով խտալացի, ֆրանսիացի, անգլիացի, ուկրաինացի, ադրբեջանցի, բրազիլացի, մեքսիկացի, պերսիացի, կորեացի և այլն: Մի մասն էլ առանց այս ածանցների է՝ հայ, ռուս, թուրք, հույն, լեհ, սերբ, հնդկ, արաբ և այլն: -ազգի վերջնաբաղադրիչով բառերը շատ քիչ են՝ հայազգի,

ուսանողի (վերջինս ԺՀԼԲԲ-ում համարվում է խոսակցական շերտի բառ)¹⁰: Նշված բաղադրիչով երկու բառ ենք նկատել՝ պարթևագրի, ճապոնագրի:

«Պարթև ազգին պատկանող» իմաստն արտահայտվում է պարթև, պարթևազն բառերով, տարածված է առաջինը, երկրորդը պատմաբառ է: «Հայք» շաբաթաթերթի համարներից մեկում հանդիպել ենք նույնիմաստ պարթևագրի բառին: Օրինակ՝ «Երկու օտարազգի՝ պարթևագրի թագավորի և արքայասպանի որդի պարթև քրիստոնյայի (ապագա կաթողիկոսի) հրամանով ոչնչացվեց հայոց հսկայական մշակույթը...» («Հայք», 12. VI. 1991, էջ 4):

«Ճապոնական ազգին պատկանող» իմաստը սովորաբար արտահայտվում է ճապոնացի, ճապոնուհի բառերով, ուսումնասիրած թերթերից մեկում կա ճապոնագրի բառը: Օրինակ՝ «ԱՄՆ-ի և Կանադայի կառավարությունների կողմից երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կրած զրկանքների համար ճապոնագրի քաղաքացիներին տրված դրամական հատուցման փաստը ևս փտահոլություն է ներշնչում...» («Անդրադարձ», 30. IV. 1991, էջ 4):

Կիս(ա)- բաղադրիչով են կազմվել հետևյալ բառերը՝ կիսառուս՝ «կիսով չափ ուսա», կիսահրեա՝ «կիսով չափ հրեա», այսինքն՝ ծնողներից մեկը ուսա է, մյուսը՝ հրեա: Օրինակ՝ «...Աբխազ Դաուրին սիրահարված սիրունատես կիսառուս, կիսահրեա Իրինա Վիշուբը կասկածի տակ առավ նրա ասածները...» («Մաշտոց», 16. IV. 1991, էջ 2):

Չնայած արդի հայերենում «ուսա, եզդի ազգերի իգական սեռի ներկայացուցիչ» իմաստները, որպես կանոն, արտահայտվում են ուսա, եզդի բառերով, այնուհանդերձ, հայուհի, վրացուհի, պարսկուհի, անգլուհի, իտալուհի, ֆրանսուհի, հոլանդուհի և այս կարգի այլ բառերի նմանությունը կազմվել են ուսուհի, եզդուհի դիպվածային բառերը: Օրինակներ՝ «Պետրոսը փորձ արեց Եվրոպան տեղափոխել Ռուսաստան, որտեղ ազնվականը իր տան շան լակոտների համար հորդուն ստինքներով ուսուհի էր պահում» («Երկիր ավետյաց», 1991, № 7, էջ 4): Ակնհայտ է ուսուհի բառի բացասական իմաստը: «Եզդուհի մի աղջնակ կանգնել էր ճամփեգրին ընկած ժայռաբեկորի գագաթին ու բարձրից դիտում էր այդ սրտահույզ տեսարանը» («Դպրություն», 18. VII. 1991, էջ 4):

Հայարի բառի կաղապարով է կազմված հնդարի («հնդիկ արի») բառը: Օրինակ՝ «Այս տրամաբանությունը, բացի պարսիկներից, ոչ ոք արիական ծագում չունի, անգամ հնդարիները...» («Անդրադարձ», 12. III. 1991, էջ 2):

Ազգությունը, ազգայինին, կոնկրետ այս կամ այն ազգին վերաբերող, ազգություն ցույց տվող նորակազմ բառեր, իհարկե, գործածվել են նաև հետագա շրջանի հայ հրապարակախոսությունում, մամուլի լեզվում, առհասարակ գրավոր խոսքում¹¹:

Եզրակացություն

Ազգությունը և ազգայինին վերաբերող նորակազմ բառերը ուրույն տեղ են զբաղեցնում հետխորհրդային շրջանի հայաստանյան մամուլի հրապարակախոսություն լեզվում: Դրանց մի մասն ազգային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների, մի մասն էլ՝ ազգային այս կամ այն հասկացությունն ու երևույթը նորովի նոր բառերով անվանելու արդյունք են:

¹⁰ ԺՀԼԲԲ. 1980, 256:

¹¹ Հմմտ. էլ ո յ ա ն. 2002, Մ ե յ թ ի խ ա ն յ ա ն. 1996, Նոր բառեր. 2015–2022:

Հրաչյա Բալոյան – Բ. Գ. Թ.: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմություն, տերմինաբանություն: Հեղինակ է 1 մենագրության և 4 հոդվածի: ORCID:0009-0009-0758-8752; hrachyab@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- «Ազատամարտ» (Երևան), 1991:
Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1642 էջ:
«Այսօր» (Երևան), 1992:
«Անդրադարձ» (Երևան), 1991:
«Անկախություն» (Երևան), 1993:
«Դպրություն» (Երևան), 1991:
«Երկիր» (Երևան), 1992:
«Երկիր ավետյաց», (Երևան), 1991:
Էլյան Ս. 2002, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, «Նաիրի» հրատ., 436 էջ:
Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. 1969–1980, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, 601 էջ, հ. 2, 714 էջ, հ. 3, 574 էջ, հ. 4, 828 էջ:
«Լուսավորիչ» (Երևան), 1991:
«Հայաստանի Հանրապետություն» (Երևան), 1991:
«Հայք» (Երևան), 1991:
«Մաշտոց» (Երևան), 1991:
Մեյթիսանյան Փ. 1996, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, «Փյունիկ» հրատ., 208 էջ:
Նոր բառեր. 2015–2022, Երևան, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատ., պր. Ա, 196 էջ, պր. Բ, 184 էջ, պր. Գ, 158 էջ, պր. Դ, 172 էջ, պր. Ե, 175 էջ, պր. Զ, 221 էջ, պր. Է, 260 էջ:
Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ., 1242 էջ:

СЛОВА, ОТНОСЯЩИЕСЯ К НАЦИОНАЛЬНОСТИ И К НАЦИОНАЛЬНОМУ В ЯЗЫКЕ ПУБЛИЦИСТИКИ АРМЯНСКОЙ ПРЕССЫ (Начало 1990-х годов)

РАЧЬЯ БАЛОЯН

Резюме

Ключевые слова: армянская пресса, нация, национальный, новообразованные слова, значение, армянский, армянин, русский.

В языке публицистики армянской прессы 1991–1993 гг. многочисленны новообразованные слова, относящиеся к национальности, национальному. Среди них доминируют слова, состоящие из компонента *ազգ* (нация). В

числе последних есть прилагательные, образованные по шаблону *ազգ* (нация)+простое существительное, где субстантивные окончания выражают причастные значения. Некоторые слова образованы по шаблону *նա*+отглагольное существительное (с суффиксом *-ութ*) (-е'ние, -а'ние). Ряд слов составлены по шаблону *ազգ* (нация)+существительное (с суффиксом *-ություն*) (-ность). Имеем также слова, образованные по шаблону *ազգ* (нация)+прилагательное. С компонентом *ազգ* (нация) нам встретился только один глагол. Были образованы также слова другого рода с суффиксом *-ություն* (-ность). Есть три слова, образованные элементом *էթն(ոս)* (этнос)). Некоторые слова, относящиеся к армянам, образованы по шаблону *հայ* (армянин) + существительное (или отглагольное имя). В этой смысловой подгруппе имеем также слова по шаблону названия страны, населенного пункта, административной единицы + *հայ* (армянин, армянский). Некоторые из неологизмов, связанных с русской нацией, образованы по шаблону *ռուս* (русский) + существительное (со значением имеющий что-то). Шаблон некоторых *-ռուս* (русский) +глагольный корень, в смысле субъектного причастия. Есть также слова, образованные по шаблону *ռուս* (русский)+существительного (с суффиксом *-ություն*) (-ность). Среди неологизмов, относящихся к русской нации, есть и иностранные слова. Некоторые слова, относящиеся к другим нациям, составлены по шаблону название нации + *ազնակ* (-изировать). Шаблоном некоторых слов является название народа (+*ազնակ* (-ский))+*ացութ* (-ация). В этот ряд также входят слова с окончанием *-ազգի* (-нация). Встречаются также слова с компонентом *կիս(ա)*- (полу-), а также новообразования с суффиксом *-ակ* (-ка).

Րաչյա Բալոյան – ք. փիլոլ. ու. Նախնական ինտերեսներ: ժամանակակից հայկական լեզու, արևմտահայկական լեզու, հայկական լեզվի պատմություն, տերմինաբանություն. Այս աշխատանքում 1 մոնոգրափիա և 4 հոդվածներ. ORCID:0009-0009-0758-8752; hrachyab@gmail.com

WORDS RELATED TO NATIONALITY AND NATIONAL IN THE LANGUAGE OF JOURNALISM OF THE ARMENIAN PRESS (Early 1990s)

HRACHYA BALOYAN

Summary

Keywords: Armenian press, nation, national, newly formed words, meaning, Armenian (language), Armenian (nation), Russian.

There are numerous newly formed words related to nationality and national in the language of journalism of the Armenian press for the period from 1991 to

1993. Among the words related to nationality and national, the words consisting of the component *uqq* (nation) dominate. Among the latter, there are adjectives that are composed of nation + simple noun pattern, where the noun endings express a participial meaning. Some words are formed in the pattern nation + verbal noun (with the suffix *-ուծ* (the same as *-tion* in English)). A number of words were formed in the pattern nation + noun (with the suffix *-ություն* (the same as *-ity* in English)). We also have newly formed words composed of *uqq* (nation) + adjective pattern. We have encountered only one verb with the component *uqq* (nation). Some words of another kind were also composed with the suffix *- ություն* (the same as *-ity* in English). There are three words formed by the component *էթն(ոս)* (ethnos (ethnicity)). Some of the words referring to Armenians are composed according to the pattern *հայ* (Armenian) + noun (or verbal noun). In this semantic subgroup, we also have words in the pattern the name of the country, settlement, administrative unit+ *հայ* (Armenian). Some of the newly formed words related to the Russian nation are formed in the pattern *ռուս* (Russian) + noun (with the meaning 'having something'). The pattern of some is *ռուս* (Russian) + verbal root in the meaning of subjective participle. There are also words composed of the pattern *ռուս* (Russian) + noun (with the suffix *- ություն* (the same as *-ity* in English)). There are also foreign words among the neologisms related to the Russian nation. Some of the words referring to other nations are formed according to the pattern nation name + *ացնել* (the same as *-ize, -ify* in English). The pattern of some words is the name of the nation (+*ական*)+ *ացում* (the same as (+*ian*) +*tion* in English). This line also includes words with the ending *- ազգի* (the same as *-ian* in English). There are also words with the component *կիս(ա)* (the same as *-semi* in English) and some neologisms with the suffix *- ուհի* (Armenian suffix for females).

Hrachya Baloyan – Candidate of Philological Sciences. Scientific interests: Modern Armenian, West-Armenian, history of the Armenian language, terminology. Author of 1 monograph, 4 scientific articles. ORCID:0009-0009-0758-8752; hrachyab@gmail.com